## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**29 մայիսի 2015 թվականի N 55-Ա**

### <<ԳՈՐԻՍԻ ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետով, **կ ա ր գ ա դ ր ո ւ մ ե մ՝**

1.2015թ.մայիսի 29-ից լուծել <<Գորիսի Սերո Խանզադյանի անվան N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամայիս Փարսյանի հետ 2011 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված N 24 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝ Ա.Փարսյանի անձնական դիմումը:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2015թ. մայիսի 29*
*ք. Կապան*